

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԲԱՅԱՆ ԼԻԼԻԹ ԱՐԿԱԴԻԻ

**ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՉԱՍԻՋՈՑՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ
(հայերենի գուգադրությամբ)**

**Ժ.02.08 - «Ռոմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Մ.Ս. Ղազարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ա.Կ. Բարլեզիզյան**

Բանասիրական գիտությունների թեկնածու՝ **Գ.Ռ. Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 11:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի 009 - «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2015 թ. հոկտեմբերի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

Հասարակության զարգացման տարբեր փուլերում անհատը, որպես յուրահատուկ խառնվածք, հաղորդակցական առաքելություն է իրականացնում այն միջավայրում, առանց որի նրա գոյությունը հնարավոր չէ պատկերացնել: Քաղաքավարությունը մարդու նկատմամբ վերաբերմունքի արտահայտման ձև է, որի նպատակն է կանոնակարգել հասարակության անդամների փոխադարձ հարաբերությունները՝ անհատի գոյությունը հանրային կեցության պայմաններում առավել արդյունավետ և միննույն ժամանակ առավել հաճելի դարձնելու համար:

Ատենախոսության ուսումնասիրության **առարկան** քաղաքավարության արտահայտչամիջոցներն ու լեզվամշակույթն է, խոսքային վարվեցողության հաղորդակցական կաղապարների առանձնահատկությունները՝ ֆրանսերենում՝ հայերենի զուգադրությամբ: Լեզվի և մշակույթի փոխադարձ կապի նկատմամբ հարաճուն ուշադրությունը բացատրվում է համընդհանուր համաշխարհայնացմամբ, որի հրամայականն է միջմշակույթային հաղորդակցության արդյունավետությունն ապահովելու նպատակով նախապես տիրապետել սեփական և օտարի մշակույթին, որոնք առկա տարբերություններով հանդերձ ունեն ընդհանուր եզրեր, որոնք էլ ապահովում են հաղորդակցությունը՝ հիմնվելով միջմշակույթային ընդհանրությունների վրա:

Աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել են լեզվախոսական տարբեր ոճերին պատկանող քաղաքավարական կաղապարներ ողջույնի, բարեմաղթանքի, հրաժեշտի, ինդրանքի իմաստային դաշտերի շրջանակներում: Առանձնահատուկ ուշադրությամբ անդրադարձել ենք հատկապես ֆրանսալեզու նամակագրության ժանրի քաղաքավարության լեզվաոճական առանձնահատկություններին:

Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվել ստեղծել քաղաքավարի խոսքի կաղապարների «Ֆրանսերեն-հայերեն թեմատիկ տեղեկագիր»: Յուրաքանչյուր թեմատիկ խմբում առանձնացված են լեզվախոսքային կաղապարներ՝ իրենց իրադրային և ոճական տարբերակներով: Աշխատանքի ընթացքում օգտվել ենք ֆրանսիական գեղարվեստական գրականությունից /Մ. Տրուայա, Օ. դը Բալզակ/, ժամանակակից ֆրանսիական մամուլից /Le Monde, Le Figaro, Le Parisien, Libération, 2012-2013/, լեզվակիր իրագեկիչների օմանդակությունից /Մարիել Դավուդյան, Արևելյան լեզուների և մշակույթի ազգային ինստիտուտ, գիտաշխատող, Իզաբել Գինել, Պրահայում ֆրանսիական ինստիտուտի տնօրեն, համագործակցության և մշակույթային գործունեության խորհրդական, Սիբիլ Ռասսու, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան կցորդ/, ինչպես նաև արևելահայերենի ազգային կորպուսի կայքից (eanc.net), ֆրանսերենի նյութին համապատասխան համարժեք հայերեն նյութը ներկայացնելու համար:

Աշխատանքում ուսումնասիրել ենք ֆրանսերենում քաղաքավարության խոսքային դրսևորումների բառաքերականական և լեզվառճական միջոցները և դրանց հայերեն համարժեք կառույցները:

Ուսումնասիրվող թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նախ այն հանգամանքով, որ ֆրանսիական մշակույթը հայտնի է որպես եվրոպական քաղաքակրթության հենք, որի հիման վրա զարգացել են համաեվրոպական քաղաքավարության հիմնական կանոնները: Ուստի զարմանալի չէ, որ սույն ատենախոսության մեջ փորձում ենք վերհանել ֆրանսիական մշակույթում խոսքային վարվեցողության հիմնական լեզվական կաղապարները, որոնք ընկած են արդի միջմշակութային հաղորդակցության էթիկական նորմերի հիմքում: Հայերենի հետ դրանց զուգադրման միջոցով հնարավոր է դառնում արտածել հայ-ֆրանսիական միջմշակութային հաղորդակցության հատկանշական ընդհանրություններն ու տարբերությունները: Թեման արդիական է նաև միջմշակութային կրթության ապահովման, ինչպես նաև ժամանակակից հաղորդակցման լեզվառճական նորմերի, դրանց օրինաչափությունների բացահայտման տեսանկյունից:

Միջմշակութային հաղորդակցության, ինչպես նաև միևնույն մշակույթի շրջանակներում միջանձնային հարաբերությունները նախնառաջ պայմանավորված են խոսքային վարքի նորմերի կանոնակարգմամբ. այդ տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում քաղաքավարի խոսքի կաղապարների ուսումնասիրությունը:

Սույն ատենախոսության **նպատակը** ժամանակակից ֆրանսերենի քաղաքավարի խոսքի լեզվական արտահայտչամիջոցների և խոսքային կաղապարների ուսումնասիրությունն է: Աշխատանքը նպատակ ունի նաև քննել *«քաղաքավարություն» հասկացույթը*, քաղաքավարի խոսքի կաղապարների և ռազմավարությունների լեզվառճական արժեքն ու առանձնահատկությունները հայերենի հետ միջլեզվական զուգադրման միջոցով:

Վերոգրյալն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները**.

- ուսումնասիրել թեմային վերաբերող աշխատությունները, ներկայացնել *«քաղաքավարություն» հասկացույթը* և վերջինիս լեզվական դրսևորման ձևերը ֆրանսիական և հայկական մշակույթներում, բացահայտել քաղաքավարության նորմերի տարբերությունները երկու մշակույթներում,

- կատարել հասկացույթի և դրա լեզվական դրսևորումներին՝ խոսքային կաղապարների լեզվառճական յուրահատկություններին վերաբերող ընդհանրացումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի հանգել միջմշակութային հաղորդակցության առանձնահատկություններին առնչվող

եզրահանգումների՝ հաշվի առնելով քաղաքավարարության վերաբերյալ արդի գործաբանական տեսությունները,

- անդրադառնալ լեզվաոճական տարբեր մակարդակներում քաղաքավարության արտահայտման ձևերին բանավոր և գրավոր հաղորդակցության ընթացքում և ներկայացնել քաղաքավարության խոսքային դրսևորումները ժամանակակից ֆրանսերեն լեզվի տարբեր ոճերում, ինչն իր արտացոլումն է գտել, մասնավորապես, ֆրանսալեզու նամակագրության ժանրում: Այս ուսումնասիրությունը թույլ կտա տարբերակել քաղաքավարության ռազմավարությունների և իմաստային-գործառական դաշտերի կաղապարային տարբերությունները, որոնք պայմանավորվում են հաղորդակցության անդամների սոցիալական, գենդերային և այլ գործոններով:

- վեր հանել հաղորդակցական յուրաքանչյուր կաղապարին և նորմին բնորոշ լեզվական, քերականական և ոճական կայուն միավորները ֆրանսերեն և հայերեն համապատասխան արտահայտություններում:

Ուսումնասիրության նյութն ընդգրկում է ֆրանսերենում քաղաքավարի խոսքի կայուն արտահայտությունները: Ներկայացնում ենք «քաղաքավարություն» *հասկացությի* լեզվաոճական արտահայտության տարբեր ձևերը ֆրանսերենում և հայերենում՝ պայմանավորված սոցիալ-մշակութային առանձնահատկություններով:

Ատենախոսության **հայեցակարգային հիմքն** են կազմում Օ. Դյուկրոյի, Է. Բենվենիստի, Շ. Սորիսի, Ա. Կյուլիոլիի, Ժ.Բ. Անսկուրբի, Դ. Վիլսոնի, Դ. Սպերբերի, Կ. Կերբրատ-Օրեկիոնիի, Վ. Գակի, Կ. Օլիվիեյի, Ժ. Կուրտեսի, Փ. Բրաունի, Ս. Լևինսոնի, Է. Հոֆմանի, Հ. Գրայսի, Ա. Ջաքերի, Գ. Լիչի, Ռ. Սքոլոնի, Ս. Սքոլոնի, Ն. Արուտյունովայի, Ա. Վեժբիցկայի, Վ. Հուսբոլդտի, Վ. Կարասիկի, Յու. Ստեպանովի, Ն. Ֆորմանովսկայայի և այլ գիտնականների աշխատությունները:

Աշխատանքի ընթացքում կիրառել ենք համագիտական և լեզվաբանական **մեթոդներ**. համադրություն, դասակարգում, լեզվաոճական, լեզվագործաբանական, բաղադրիչային, կաղապարային վերլուծություն, գուգադրական քննություն և այլն:

Ատենախոսության **նորույթը** պայմանավորված է գուգադրվող լեզվական նյութի ընտրությամբ: Մեթոդական տեսանկյունից նորույթ է լեզվաոճական քննության իրականացումը գործաբանական հայեցակերպի շրջանակներում: Մեր աշխատանքում քաղաքավարության խոսքային ակտերը, մաքսիմները լուսաբանվում են լեզվաոճական հնարների կիրառման տեսանկյունից: Առաջին անգամ փորձ է արվում ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից կատարել «քաղաքավարություն» *հասկացությի* համապարփակ ուսումնասիրություն, հետազոտվող միավորների բաղադրիչային ուսումնասիրություն, ինչպես նաև

գուգադրական վերլուծություն հայերեն համարժեք միավորների հետ: Նման համալիր մոտեցումը, մեր կարծիքով, թույլ է տալիս հնարավորինս ամբողջական պատկերացում կազմել վարվեցողության նորմերի լեզվական և միջլեզվական ընդհանրությունների և տարբերությունների մասին:

Ատենախոսության **տեսական արժեքը** պայմանավորվում է «քաղաքավարություն» հասկացության ուսումնասիրությամբ ժամանակակից ֆրանսիական և անգլո-ամերիկյան դպրոցների գործաբանական տեսությունների լույսի ներքո, ինչպես նաև քաղաքավարության լեզվաճական հնարների գործիքակազմի վերլուծական քննությամբ: Առաջադրվում են խոսքային-իրադրային կաղապարներ ու մեկնաբանություններ, որոնք հետագայում կարող են զարգացվել և կիրառվել այլ միջգիտակարգային ուսումնասիրությունների ընթացքում:

Ֆրանսերեն լեզվանյութի ընտրությունն ու հավաքագրումը, ապա և ուսումնասիրությունը հայերեն համարժեքների գուգադրությամբ ստենախոսության **գործնական արժեքն է**: Հետազոտությունը, ինչպես նաև հրապարակված նյութերը կարող են օգտակար լինել լեզվական կրթության, միջմշակութային հաղորդակցության, թարգմանության խնդիրներին առնչվող դասընթացների համար: Նամակագրության ժանրում կատարած մեր ուսումնասիրությունն ուղղակի կիրառություն կարող է գտնել ֆրանսերենի գրավոր խոսքի դասավանդման գործընթացում: Աշխատանքում փորձ է արվել նաև ստեղծել քաղաքավարության խոսքային կաղապարների ֆրանսերեն-հայերեն տեղեկագիր:

Ատենախոսության **կառուցվածքը** ծառայեցրել ենք առաջադրված նպատակի և խնդիրների լուծման տրամաբանությամբ: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխից, եզրակացությունից, օգտագործված գրականության և կայքերի ցանկից, հավելվածներից: Աշխատանքում տեղ են գտել աղյուսակներ, սխեմաներ, ինչպես նաև քաղաքավարության կայուն արտահայտությունների ցանկեր:

Ներածության մեջ ներկայացվում են աշխատանքի թեման, արդիականությունն ու գիտական նորոյթը, ուսումնասիրության նպատակն ու առաջ քաշված խնդիրները, ինչպես նաև տեսական ու գործնական արժեքները:

Ատենախոսության **առաջին գլուխը** վերնագրված է «Քաղաքավարություն հասկացության քննական ուսումնասիրություն», այն բաղկացած է երեք ենթագլխից և նվիրված է «քաղաքավարություն» հասկացության տեսական վերլուծությանը: Այստեղ հիմք է ընդունվում Կ. Կերբրատ-Օրեկլիոնիի, Ն. Արոտյունովայի, Ա. Վեժբիցկայի, Վ. Կարասիկի, Յու. Ստեպանովի, Վ. Տելիայի, Ն. Ֆորմանովսկայայի և այլոց աշխատանքները: Առաջին ենթագլխում («Քաղաքավարության լեզվամշակութաբանական ըմբռնումը») ներկայացվում է

լեզվամշակութաբանության հիմքում ընկած լեզվի և մշակույթի փոխհարաբերությունն ու փոխկապակցվածությունը և դրանց ուսումնասիրության ասպարեզում քաղաքավարության քննության նշանակությունը:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում («Քաղաքավարությունն իբրև հասկացույթ») անդրադառնում ենք «քաղաքավարություն» հասկացության: Փորձ է արվում վեր հանել դրա սահմանման լեզվաբանական, ճանաչողական, հոգեբանական և այլ տեսակետները՝ ի մի բերելով ժամանակակից գիտության մեջ առկա տարբեր մոտեցումներ:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում («Քաղաքավարությունն իբրև վարքագիծ») կատարվում է «քաղաքավարություն» հասկացության դիտվածքի քննություն՝ խոսքային կաղապարների գործաբանական վերլուծության լույսի ներքո: Այս առումով առավել կարևորում ենք քաղաքավարության ռազմավարությունները տարբեր խոսքային ակտերի կառուցման ժամանակ: Ըստ Ռ. և Ս. Մքոլոնների՝ քաղաքավարության ռազմավարությունները բաժանվում են երկու խմբի՝ դրական և բացասական: Ռազմավարության յուրաքանչյուր խումբ իր ուրույն կիրառությունն ունի¹: Ընդհանուր առմամբ դրական ռազմավարությունը ենթադրում է, որ հասցեագրողը պետք է կարողանա կանխատեսել ստացողի ցանկությունները, իսկ բացասական ռազմավարության դեպքում դրանք հաշվի չեն առնվում:

Ներկայացնելով «քաղաքավարություն» հասկացության արդի ըմբռնումները, ապա ուսումնասիրելով դրանց զարգացման պատմությունը Ֆրանսիայում և Հայաստանում, մենք կատարել ենք զուգադրական վերլուծություն՝ առանձնացնելով դիմելաձևի հետևյալ տեսակները.

- ավանդական ողջույնները,
- ներկայանալը:

Ողջույնը մարդկանց փոխհարաբերությունների պարզ, ավանդական և լեզվական առումով ոչ բարդ ձևերից է: Հնագույն ժամանակներից ի վեր տարբեր ժողովուրդներ ողջունելու տարբեր ձևեր են ունեցել: Վերջիններս լեզվական կամ ոչ լեզվական բնույթի են. օրինակ՝ լեզվական միջոցներ՝ Bonjour M/Mme /Բարի օր/, Bonsoir M/Mme/ Բարի երեկո/, ոչ լեզվական միջոցներ են՝ Enlever le chapeau/ Գլխարկ հանել/, Sourire aimablement/ Բարյացակամ ժպտալ/, Faire des révérence / Խոնարհվել/, Se serrer les mains / Ձեռքսեղմումներ/, և այլն:

¹ Scollon R. & Scollon S. Face in interethnic communication. //J. Richards & R. Schmidt. (Ed.), Language and communication, London, 2001.

Այսպիսով՝ «քաղաքավարություն» հասկացությունը քաղաքավարության նորմերի յուրահատուկ կիրառումն ու զարգացումն է լեզվի և մշակույթի տարբեր ոլորտներում:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերնագրված է «Քաղաքավարության գործաբանական տեսությունների վերլուծություն», այն բաղկացած է երեք ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը («Քաղաքավարության մասին արդի տեսակետների վերլուծություն») նվիրված է քաղաքավարության գործաբանական վերլուծությանը: Այն իրագործելու համար աշխատանքի մեջ կատարվում է բառարանային վերլուծություն՝ որպես գլխաբառ հիմք ընդունելով politesse բառը: Ներկայացվում է հետևյալ հոմանիշային շարքը՝ délicatesse, bienséance, civilité, courtoisie, éducation, savoir-vivre, usage, urbanité /Petit Robert 2012/: «Poli» բառի համար արձանագրվում է բառարանային հետևյալ սահմանումը «se dit d'une personne ou de son comportement dont les manières sont conformes aux règles de la bonne société ou respectueuse»: Կատարվում է նաև մեկ այլ եզրի «bienséance»-ի բառարանային բացատրության վերլուծությունը, այն է՝ «ce qui convient de dire ou de faire dans des circonstances données» և առաջարկվում է մեկ այլ հոմանիշային շարքի վերլուծություն - courtoisie-amabilité-élégance.

Ինչ վերաբերում է civilité բառին, ապա այն կարելի է դիտարկել հետևյալ նախադասության վերլուծությամբ՝ «Au cours de la réception, il a été présenté au directeur général, auquel il a fait ses civilités=compliments=salutations». Civilité բառի բառարանային բացատրությունը հետևյալն է՝ «qui observe les convenances, les bonnes manières dans les relations sociales», օրինակ՝ «Je n'ai pas de compte à lui rendre, mais je le tiens au courant par simple civilité=respect de bienséance».

Այսպիսով՝ պարզություն, անկեղծությունը, հավասարակշռությունը, ներդաշնակությունը, նրբագեղությունն արտահայտում են գրուցակցի հանդեպ բարյացակամ լինելու ձգտումը:

Գործաբանության ուսումնասիրության նյութ հանդիսացող խոսքային գործունեությունը ներառում է տեղեկություն հաղորդակցման ցուցիչների վերաբերյալ հասցեատեր, հասցեագրող, հաղորդակցման տեղ, ժամանակ: Հաղորդակցման նպատակներից դեպի այդ նպատակների իրականացումը տանող բարենպաստ միջոցները արդյունավետ դարձնելու համար գործաբանության մեջ կիրառվում է դեմքի, ես-ի և պայմանական անհատի հասկացությունները: Ըստ Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի՝ յուրաքանչյուր անհատ ունի երկու դեմք՝ դրական և բացասական: Դրական դեմքը սահմանվում է որպես անհատի իդեալական կերպար, որի բոլոր արարքները հավանության են արժանանում հասարակական փոխազդեցության ընթացքում: Իսկ բացասական դեմքն արտահայտում է անհատի՝ գործողություններում

ցանկացած հարկադրանքից ազատ լինելու ձգտումը²: Ըստ այդմ փորձել ենք ներկայացնել ֆրանսերեն օրինակներ

<p>(1) A marche sur le pied de B Réparation A: excusez-moi Satisfaction B: pas de quoi</p>	<p>(2) A sollicite le téléphone de B pour appeler Solicitation A: Puis-je me servir de votre téléphone pour appeler en ville? Satisfaction B: Bien sûr, allez-y. Appréciation A: Vous êtes très aimable. Minimisation B: Ce n'est rien.</p>
--	---

Հետևաբար, քաղաքավարության ռազմավարությունների նպատակն է նախ արժևորել զրուցակցի դրական դեմքը, որից հետո նվազեցնել ոտնձգությունները: Դրական քաղաքավարությունն ուղղված է հասցեատիրոջ դրական կեցվածքին, իսկ բացասական քաղաքավարությունը՝ բացասական կեցվածքին:

Քաղաքավարության նորմերի ճշգրիտ պահպանումը և կիրառումը կապված են միջոցների հստակ ընտրության հետ: Օրինակ՝ անքաղաքավարի երևալուց խուսափելու համար հարկ է միտքը սկսել avoir tort/se tromper արտահայտություններով, որը մի փոքր մեղմացնում է իրավիճակը և խույս է տալիս կտրուկ թվացող արտահայտչամիջոցներից: Ինչ վերաբերում է հայերեն համարժեքին, ապա այստեղ հաստատական խոսք ձևավորելու համար պարտադիր է նախադասությունը սկսել որոշակի փաղաքշական խոսքով, քանի որ խոսքային քաղաքավարությունը պահանջում է կտրուկ խոսքին որոշակի մեղմացուցիչ երանգավորում ավելացնել: Օրինակ՝ կարելի է նախադասությունը սկսել *ցավում եմ, լավ կլինի, որ, կցանկանայի* արտահայտություններով: Ֆրանսերենում խնդրանքը մեղմացվում է *aimer, vouloir* եղանակավորող բայերի միջոցով: Հայերենում առավել գործածական են *ցանկանալ/կամենալ* բայերը: Օրինակ՝ *J'aimerais discuter avec vous. Je voudrais le voir.* Ես կցանկանայի քննարկել դա Ձեզ հետ: /Ես կուզենայի նրան տեսնել:

Երկու լեզուներում էլ նշված բայերը կիրառվում են հիմնականում պայմանական եղանակի ժխտական կամ հարցական ձևերով /ne voudriez vous pas/կցանկանայի/ի՞ք, չէի՞ք կամենա/չէի՞ք ցանկանա/:

Հանդիպում են նաև կարո՞ղ է, հնարավո՞ր է կապակցությամբ սկսվող ստորադասական կառույցները: Օրինակ՝ *Comment est-ce possible? Est-ce vraiment possible? Ce n'est absolument pas possible! Ce n'est malheureusement pas possible.*

Արդի ֆրանսերենում կարելի է գտնել արտահայտություններ, որտեղ *դեմք* բառը համապատասխանում է սոցիալական իմիջին, օրինակ՝

² Brown P., Levinson C., Politeness: some universals in language usage. Cambridge: Cambridge University Press, 1987.

- «Protéger la face du partenaire» - պաշտպանել խոսակցի դեմքը/ես-ը,
- «Donner de la face» - ինքն իր «դեմքը» բացահայտել,
- «Protéger sa propre face»- պաշտպանել սեփական դեմքը/ես-ը,
- «Gagner de la face»- դեմք դառնալ, ինքն իրեն կարևորել:

Վերոնշյալ կաղապարներից յուրաքանչյուրի կիրառումը ուղեկցվում է իր գործարանական վերլուծությամբ:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Քաղաքավարություն» հասկացույթը ֆրանսիական գործարանական տեսություններում և խոսքային կաղապարներում») նվիրված է ֆրանսիական գործարանական դպրոցի քննությանը: Ֆրանսիական գործարանական դպրոցը, որի ներկայացուցիչներն են Անտուան Կյուլիոլին, Օսվալդ Դյուկրոյն և Ժան-Կլոդ Անսկոմբրը, հիմնվում է ասույթային լեզվաբանության վրա /(*linguistique de l'énonciation*):

Անդրադառնալով խոսքային կաղապարներին՝ ուսումնասիրել ենք ողջունի, խնդրանքի, բարեմաղթանքի, ներողության արտահայտչամիջոցները: Այսպես, *խնդրանք* է համարվում հարկադրական խոսքային ակտը, որի ենթադրվող գործողությունների հետ են կապվում հաղորդակցվողների հետաքրքրությունների սահմաններում իրականացված գործողությունները: Հայերենում *խնդրել* բայը /խնդրեմ - բարի եղեք արտահայտությունը/ ունի ընդգծված գործառական արժեք և կիրառում: Հրամայականի հետ օգտագործելիս այն հրամանը փոխում է խնդրանքի՝ հրամայական խնդրանքը դարձնելով քաղաքավարի արտահայտության մի ձև: Այն կարող է հնչեղանգով նշույթավորված փոփոխության ենթարկվել: Ֆրանսերենի *s'il te / vous plaît* ձևը իր գործառական արժեքով լիովին համարժեք է հայերենի վերոնշյալ արտահայտությանը: Մինչև ժամանակ ֆրանսերենում *s'il te / vous plaît* կաղապարի կիրառումը ցանկալի է, նույնիսկ անհրաժեշտ, եթե անգամ այն կիրառվում է *prier* բային զուգահեռ:

Je vous prie /demande/ de me passer/s'il te/vous plaît. Pourriez-vous me passer /Փոխանցե՛ք, խնդրեմ

Փոփոխությունների միջոցը նպատակ ունի ոչ թե մեղմացնելու խնդրանքը, այլ այն առավել ընդգծված դարձնելու:

Ayez l'amabilité de / Բարի եղեք - Avoir l'amabilité de
Puis-je lui demander d'avoir l'amabilité de conclure?

Այնպիսի արտահայտությունները, ինչպիսիք են *Aidez – moi, s'il vous plaît. Ne fumez pas, s'il vous plaît* բնութագրվում են որպես ցածր մակարդակի բարեկրթություն կամ քաղաքավարություն: Նախապատվությունն ավելի հաճախ տրվում է ավելի ընդլայնված արտահայտություններին *Ne/ Pourriez-vous /pas/ m` aider. /Pourriez-vous me dire la vérité.*

Ֆրանսերենում պայմանական եղանակը կիրառելի է ոչ միայն հավանական կամ հնարավոր գործողություններ արտահայտելու համար,

այլև քաղաքավարության արտահայտություններում որպես լիարժեք կառույց: Ժխտման մասնիկները հիմնականում օգտագործվում են քաղաքավարության աստիճանը ցույց տալու համար, քանի որ դա ենթադրում է երկակի պատասխան և հնարավորություն է տալիս զրուցակցին ունենալու պատասխանի ընտրության հնարավորություն:

Ողջույն - Ֆրանսերենում և հայերենում գոյություն ունեն ողջույնի ընդհանուր ձևեր: «Հարգանքներիս հավաստիքը» արտահայտությունը ֆրանսերենում ունի համարժեք *mes respects* ձևը: Հայերենում այս արտահայտչամիջոցն ունի առավել լայն կիրառում, կարելի է և՛ ողջունել, և՛ հրաժեշտ տալ: Հրաժեշտ տալիս մասնավորապես տարիքով մարդիկ հաճախ օգտագործում են քաղաքավարության այնպիսի ձևեր, որոնք ներառում են հարգանք ոչ միայն դիմացինի անձի, այլև ընտանիքի մյուս անդամների հանդեպ, օրինակ՝ «Հարգանքներս հաղորդեք Ձեր տիկնոջը / ընտանիքի անդամներին» արտահայտությունները: Ֆրանսերենում համարժեքը հետևյալն է՝ «*Transmettez mes salutations les plus respectueuses à madame votre épouse / aux membres de votre famille*».

Ներողություն հայցող միջոցների հիմնական գործառույթը սոցիալական հավասարակշռության կամ հաղորդակցվողների միջև ներդաշնակության ապահովումն է: Ներողություն արտահայտելու ժամանակ առավել հաճախ օգտագործվում են հետևյալ չեզոք ձևերը՝ ներեցե՛ք, ներողություն – *Excusez – moi! Pardon!* Այս ձևերը ներառում են նաև ներեցե՛ք, ինդրեմ – *Excusez-moi, s’il vous plaît!*, *Je vous prie de m’excuser!*, ինչը ենթադրում է ներողություն խնդրել ինչպես նկատելի, այնպես էլ անզգույշ, աննկատ արարքի համար: Երբ խոսքը վերաբերում է ավելի լուրջ արարքի, միտումնավոր օգտագործվող նախադասություններում ներում հայցող բառերին զուգահեռ գործածվում են բացատրական բառեր, օրինակ՝ ես մեղավոր եմ, որ..., Ցավում եմ, որ ... *Désolé - avoir tort de + infinitif*³: Բացի վերոնշյալ օրինակներից նաև հանդիպում են ներողություն արտահայտող այնպիսի կառույցներ, որոնք ներառում են պարտավորեցման տարրեր. ի դեպ, զրուցակցի նկատմամբ պարտավորեցումը կարող է լինել տեսանելի (ես պետք է) կամ անուղղակի (ես չեմ կարող չ...): Ֆրանսերենում հաղորդակցման ժամանակ ներում հայցողի պարտավորեցումն արտահայտվում է ուղիղ ձևով՝ *fallor, devoir* եղանակավորող բայերի օգնությամբ՝ *Il faut que je m’excuse auprès de vous. Je dois vous demander pardon*. Ես չեմ կարող Ձեզանից ներողություն չխնդրել: Ես պետք է /պարտավոր եմ Ձեզանից ներողություն խնդրել:

Յուրաքանչյուր իրավիճակում ֆրանսերենում խոսքային ակտն առավել պաշտոնական, արտահայտիչ, սպավորիչ դարձնելու համար օգտագործում են *Monsieur, Madame – Pardon, Monsieur/Madame* բառերը: Հարկ

³ Le Petit Robert de la Langue Francaise, 2012.

Է նշել, որ Pardon! –ը առավել չեզոք ձև է, ավելի չեզոք, քան, օրինակ Excusez – moi կամ Voulez – vous m’excuser ձևերը⁴:

«Քաղաքավարություն» հասկացության ուսումնասիրությունը այս ենթագլխում ցույց է տալիս, որ քաղաքավարության տեսակները, ինչպես նաև խոսքային ակտերը կապված են հաղորդակցական ակտին մասնակից անհատների մերձեցման և հեռացման հետ:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխում («Ֆրանսիական քաղաքավարությունը ժամանակակից նամակագրության ժանրում») ուսումնասիրվում են ֆրանսիական նամակագրության ժանրի առանձնահատկությունները և յուրաքանչյուր մասնավոր դեպքում կաղապարների ճշգրիտ կիրառման առանձնահատկությունները: Փորձ է արվում վեր հանել ֆրանսիական հասարակությանը բնորոշ քաղաքավարական կաղապարները: Նամակագրության բնագավառում քաղաքավարական արտահայտչամիջոցները փոփոխվում են ըստ ժամանակաշրջանի, սոցիալական խմբերի, սեռի և նույնիսկ անհատների և յուրաքանչյուր բնագավառում ունեն խոսքային ակտերի իրենց յուրահատուկ կայունությունը: Ներկայացնում ենք նաև նամակագրության առանձին խմբերում կիրառվող և ընդունված կայուն արտահայտություններ: Նամակագրության ժանրում զուգահեռաբար հանդես են գալիս դրական և բացասական քաղաքավարությանը բնորոշ տարրեր, որոնք ենթադրում են երբեմն մտերմություն զրուցակցի հետ, հեռավորության կրճատում՝ չխախտելով անձնական տիրույթի թույլատրելի սահմանները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «Ֆրանսերեն քաղաքավարի խոսքի կաղապարները և դրանց հայերեն համարժեքները», այն բաղկացած է երեք ենթագլխից: Վերլուծվող նյութը ներկայացվում է թեմատիկ աղյուսակների և սխեմաների տեսքով, ինչն առավել ակնհայտ է դարձնում զուգադրական ուսումնասիրությունը և դրա արդյունքները:

Երրորդ գլխի առաջին ենթագլուխը («Ֆրանսերենում քաղաքավարի խոսքի կառուցվածքային կաղապարներ») նվիրված է ֆրանսերենի քաղաքավարի խոսքի կառուցվածքային տիպերի ուսումնասիրությանը, ներկայացվում են դրանց հայերեն համարժեքները, ինչպես նաև հստակեցվում են համընդհանուր և մասնավորապես ֆրանսիական մշակույթով պայմանավորված քաղաքավարության արտահայտչամիջոցները: Առաջարկվում են քաղաքավարի խոսքի իմաստային դաշտերի, դրանց ֆրանսերեն և հայերեն բնութագրերի ընդհանուր սահմանումները:

⁴ Gendrey P., Plus de 1000 modeles de lettres et de contracts, prat edition, 2012.

Երրորդ գլխի առաջին ենթագլուխը բաղկացած է երկու մասից («Ողջույնի ձևերը և դրանց կիրառման առանձնահատկությունները ֆրանսերենում» և «Ողջույնին ուղեկցող արտահայտություններ»), որոնց ուսումնասիրության առարկան են ողջույնի լեզվական և արտալեզվական ձևերը: Սովորաբար ոչ մտերիմ անձանց ողջույնի արտահայտությունն ուղեկցվում է ձեռքսեղմումով, իսկ ընտանիքի անդամների կամ մտերիմների ողջույնը՝ համբույրով /երկու, երեք կամ չորս կախված տվյալ տարածաշրջանի քաղաքակրթության առանձնահատկությունից/: Ողջույնի արտահայտությունները ֆրանսերենում և հայերենում բացառությամբ *Bonjour, Permettez- moi de vous saluer!- Je suis heureux de vous saluer!* Թույլ տվեք ողջունել Ձեզ, Ուրախ եմ Ձեզ ողջունել, ձևերի, որոնք գործածվում են պաշտոնական ոճում և լայն տարածում ունեն հատկապես մեծահասակների շրջանում, հստակ արտահայտում են վերաբերմունք գրուցակցի նկատմամբ: Ոճականորեն ընդգծված ողջույնի ձևերը օգտագործվում են միմյանց լավ ծանոթ, մտերիմ մարդկանց շփման ժամանակ: Աշխատանքի այս մասում ներկայացնում ենք նաև ժամանակակից խոսակցական ֆրանսերենում, հատկապես երիտասարդների շրջանում, առավել հաճախադեպ ողջույնի արտահայտությունները, օրինակ, *Wesh/ouaich!, Yo!, Bien ou quoi?* և այլն:

Ողջույնի արտահայտությունների լեզվաոճական առանձնահատկությունների քննությունը թույլ է տալիս արձանագրել այն իրողությունը, որ եթե խոսակցական ոճին հատուկ են հիմնականում անվանական միակազմ նախադասությունները /կառույցները/, ապա բարձր ոճին բնորոշ են նաև երկկազմ, ընդարձակ նախադասությունները, որոնց ստորոգյալներն արտահայտվում են հրամայական եղանակով: Ֆրանսերենի *Comment allez-vous? Comment ça va? Comment vas-tu? ça va?/* ինչպե՞ս եք/ես ձևերը հաճախ ուղեկցում են ողջույնի արտահայտություններին: Երկու լեզուներում էլ ակնկալվում են հակիրճ, լավատեսական պատասխաններ: Օրինակ՝ *À merveille! À la perfection! Sensationnel!* - հիանալի, գերազանց: Գործածական են չեզոք պատասխանները, օրինակ՝ *Je ne me plains pas/pas mal/ ça va/ On fait aller!* - լավ, ամեն ինչ լավ է, չեմ դժգոհում, ոչինչ: Հաճախ ողջույնին ուղեկցող հարցերն ունեն ոչ վերաբերական արժեք (*valeur non-référentielle*):

Հատուկ ուշադրության են արժանի նաև ողջույնին ուղեկցող արտահայտությունները, որոնք երկու լեզուներում ունեն ոճական առանձնահատկություններ: Արտահայտությունների ընտրության համար կարևոր նշանակություն ունեն հանդիպման վայրը և հանգամանքները: Օրինակ՝ *C’était bien d’avoir passé cette soirée ensemble/ J’ai été très content(e) de vous/te voir, Merci pour cette charmante soirée* - Հաճելի էր երեկոն անցկացնել Ձեզ/քեզ հետ: Ծնորհակալ եմ հաճելի երեկոյի համար արտահայտություններն օգտագործվում են միմյանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունք

արտահայտելու համար: Ֆրանսիական քաղաքավարությունը, որն իր բնույթով դասվում է «բացասական/անջրպետող, զսպող» /politesse négative/ տիպին, առանձնակիորեն պաշտպանում է հաղորդակցվողների անձնական «դաշտի» սահմանները՝ հավաստելով զրուցակցի նկատմամբ նրբանկատ բարյացակամության և հարգանքի մասին: Ժամանակակից ֆրանսիական քաղաքավարությունը գրեթե բացառում է ողջույնին հաջորդող անձնական կյանքին վերաբերող հարցերը, մուտքը խոսակցի անձնական, անհատական տիրույթ: Այս կարգի հարցերից պետք է խուսափել՝ զրուցակցի նկատմամբ նրբանկատություն ցուցաբերելու նպատակով: Հակառակ դեպքում զրուցակցի պատասխանը կարող է լինել շատ խիստ, կտրուկ, օրինակ՝ Parlez à propos (soyez pertinent).

Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ ֆրանսերենում և հայերենում ողջույնին ուղեկցող լեզվական միջոցներին բնորոշ են նաև առանձնահատուկ հնչերանգը, քերականական մակարդակում՝ հրամայական և պայմանական եղանակաձևերը, բառային մակարդակում՝ կատարողական բայերը, հապավումներից խուսափումը, շարահյուսական մակարդակում՝ հիմնականում պարզ նախադասությունները, օրինակ, Comment vous portez-vous?/Ինչպե՞ս եք: Comment vont les affaires? /pour un homme d'affaires/Գործերն ինչպե՞ս են:

Աշխատանքում ուսումնասիրել ենք նաև արտահայտություններ, որոնք այս կամ այն հանդիպման ընթացքում կիրառվում են շփումն ավելի հեշտացնելու, միմյանց մասին առավել ամփոփ տեղեկություն ստանալու, որոշ դեպքերում նաև հստակեցում մտցնելու նպատակով: Առօրյա-խոսակցական ոճում հաճախ նկատելի են ոչ վերաբերական հարցեր, ինչպես օրինակ L'ambiance est bonne dans la famille? կամ Il y a de l'eau dans le gaz? և այլն:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Հրաժեշտի և բարեմաղթանքի միջոցները ֆրանսերենում») նվիրված է Ֆրանսերենում հրաժեշտի և բարեմաղթանքի արտահայտությունների ուսումնասիրությանը և դրանց ուղեկցող կամ փոխարինող արտահայտություններին: Ֆրանսերենում հանդիպում ենք հրաժեշտի արտահայտություններ, որոնք բացառում են հետագա հանդիպումը, օրինակ՝ On se reverra à la Saint Glinglin! արտահայտությունը կիրառվում է առօրյա-խոսակցական կամ մտերմիկ ոճերում և թարգմանաբար նշանակում է՝ երբեք չենք հանդիպի: Բացի հետագա հանդիպման վերաբերյալ ակնարկից՝ հրաժեշտը կարող է պարունակել մաղթանք: Ինչ վերաբերում է Dieu vous bénisse! հրաժեշտի արտահայտությանը, ապա նկատում ենք նաև, որ այս կաղապարներում շատ հաճախ կիրառվում են նաև կրոնական խոսքից փոխառված արտահայտություններ:

Հրաժեշտի ձևերը կարող են հաճախ փոխարինվել բարեմաղթանք արտահայտող լեզվական դրսևորումներով, օրինակ՝ Bon voyage! Bonne chance! Portez – vous bien! Bon rétablissement! Բարի ճանապարհ/ Ամենայն բարիք/ Հաջողություն/ Առողջություն/Առողջացե՛ք:

Հրաժեշտին ուղեկցող կաղապարները հաճախ կիրառվում են բարեմաղթանք արտահայտող կայուն ձևերի հետ զուգահեռ: Դրանք հիմնականում կարճ բացականչական կառույցներ են, օրինակ, Bon voyage!/Բարի ճանապարհ, Rétablis-toi vite!/Շո՛ւտ առողջացիր, Moi également!, Moi aussi!, Moi de même!/Նմանապես և այլն:

Սույն աշխատության վերջին գլխում կատարված հետազոտության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ֆրանսերենում և հայերենում նկատվում է դիմելաձևերի միասնականացման միտում: Վերջինս հիմնականում արտահայտվում է ոճական, քերականական և բառակազմական կաղապարներում: Ինչ վերաբերում է միջմշակութային առանձնահատկություններին, պապ դրանք առնչվում են գիտակցության պատմամշակութային կարծրատիպացման և այդ կարծրատիպերի՝ լեզվում արտահայտված կաղապարային դրսևորումների հետ:

Ամփոփելով սույն հետազոտությունը քաղաքավարության, դրա լեզվաոճական առանձնահատկությունների, համընդհանուր բնութագրերի, ընդհանրական բնույթի ուսումնասիրությունների, ինչպես նաև քաղաքավարության խոսքային արտահայտչամիջոցների լեզվամշակութային առանձնահատկությունների և կարծրատիպերի մասին հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Չնայած այն հանգամանքին, որ «*քաղաքավարություն*» *հասկացույթը* լեզվաբանների համար վերլուծության առարկա է դարձել դեռևս 1920-ական թվականներին, մեր օրերում ևս այս երևույթը գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում, քանի որ նոր հասարակական համատեքստում այն ձեռք է բերել նոր հատկանիշներ, որոնց մանրագին ուսումնասիրությունը և օրինաչափությունների վերհանումը կնպաստեն հաջող հարդորդակցման արդյունավետությանը թե՛ միջանձնային և թե՛ միջմշակութային հարթություններում:

2. Ինչպես ցանկացած երևույթ լեզվում, «*քաղաքավարություն*» *հասկացույթը* նույնպես առնչվում է լեզվական նորմի և կիրարկման հետ: Ֆրանսերենում հաճախադեպ կիրառման շնորհիվ այն ձեռք է բերել հետևյալ յուրահատկությունները.

ա) ողջույնի, հրաժեշտի, բարեմաղթանքի, խնդրանքի խոսքային կաղապարները՝ պայմանավորված իրադրությամբ և խոսող սուբյեկտի մտադրությամբ, ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների, մասնավորապես, լեզվակիրների տարբեր տարիքային շերտեր սկսել են

օգտագործել տարբեր կադապարներ քաղաքավարության նույն նորմերն արտահայտելու համար:

բ) քաղաքավարության խոսքային կադապարների կիրառման մեջ փոփոխությունները պայմանավորված են նաև գենդերային առանձնահատկություններով, և մեր կողմից կատարած ուսումնասիրության արդյունքներն ապացուցում են, որ կանայք ավելի են հակված քաղաքավարության նորմերը պահպանելուն և առկա կադապարներն առանց փոփոխությունների օգտագործելու:

գ) քաղաքավարության խոսքային կադապարները մեր կողմից դիտարկվել են բանավոր և գրավոր խոսքում, ինչը մեզ թույլ է տվել վեր հանել այնպիսի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ոչ միայն գրական լեզվին, այլև խոսակցականին: Վերջինս հնարավորություն է տալիս համապատասխան վերլուծությունների միջոցով ամբողջական դարձնել մեր կատարած ուսումնասիրությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղաքավարության խոսքային կադապարները զուգահեռաբար օգտագործվում են և՛ բանավոր և՛ գրավոր խոսքում, սակայն գրավոր խոսքում դրանց գործածությունն ավելի կանոնակարգված է:

3. Ֆրանսիական քաղաքավարությունը դասվում է Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի կողմից առանձնացված համաշխարհային քաղաքավարությանը հատուկ երկու դրական և բացասական տեսակներից երկրորդին, քանի որ այն հեռացնում է շփվողների միմյանցից՝ ստեղծելով նրանց միջև այնպիսի տարածություն, որի նպատակն է թույլ չտալ ներխուժել միմյանց ներաշխարհ կամ անձնական տիրույթ՝ դրանով իսկ նպաստելով գուտ ձևական-պաշտոնական քաղաքավարության կադապարների զարգացմանը լեզվում: «Բացասական» քաղաքավարությունը թույլ է տալիս խուսափել բազմաբնույթ վիճահարույց իրադրություններից, ինչը խոսքում տարաձայնություններից, կոնֆլիկտներից խուսափելու երաշխիք և նախապայման է:

4. Ուսումնասիրելով ֆրանսերենում առանձնացված քաղաքավարի խոսքի կադապարները և դրանք զուգադրելով հայերենում համապատասխան կադապարների հետ՝ բացահայտել ենք ֆրանսիական մշակույթում դրանց առավել լայն կիրառումը, ինչպես նաև ֆրանսերենում դրանց ավելի բազմազան և ավելի բազմաբնույթ լինելը:

5. Աշխատանքում առանձնացրել ենք արտահայտություններ, որոնք բնորոշում են առօրյա կյանքի դրական ընթացքը: Այդ արտահայտությունները դասակարգվել են ըստ ոճերի, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ նման կադապարներով ավելի հարուստ և բազմաբնույթ է առօրյա-խոսակցական ոճը, որտեղ /հատկապես պատասխան արտահայտությունների գործածման ժամանակ/ մեծ դեր ունի հնչերանգը: Նման կադապարներում հանդիպում են պատկերավոր արտահայտություններ, մասնավորապես լեզվական միավորի փոխաբերական կիրառություններ:

6. Ֆրանսերենում ողջույնի ձևերը, ի տարբերություն հայերենի, առանձնացված չեն ըստ կաղապարների, որոնք կիրառվում են օրվա տարբեր ժամերին: Դրան հակառակ, հրաժեշտի արտահայտությունները կաղապարված են, ավելին դրանց ուղեկցող կամ փոխարինող ձևերն ունեն որոշակի հստակեցում հետագա հանդիպման վերաբերյալ: Ֆրանսերենում հրաժեշտի կաղապարի ընտրությունը կախված է նաև ակնկալվող հանդիպման մոտավոր ժամանակահատվածից: Հրաժեշտի արտահայտությունները հաճախ ուղեկցվում կամ փոխարինվում են բարեմաղթանք արտահայտող կաղապարներով:

7. Նամակագրության ժանրի ուսումնասիրությամբ պարզվում է, որ քաղաքավարության արտահայտչամիջոցների ռճական տարբերությունները արտացոլվում են այդ ժանրում ամրագրված ռճային նորմերում, որոնք պայմանավորված են ֆրանսիական մշակույթի և քաղաքակրթության առանձնահատկություններով, վարվեցողության կարծրատիպերով և սովորույթներով: Հատկապես ուշագրավ է, որ նամակագրության ժանրում քաղաքավարի դիմելաձևերի տարբերությունները կախված են հաղորդակցվողների ոչ միայն պաշտոնից և կարգավիճակից, այլև սեռից: Այդ նորմերի ճշգրիտ կիրառումն իր անմիջական ազդեցությունն ունի «քաղաքավարություն» հասկացության ֆրանսիական ընկալումների և միջանձնային հաղորդակցության մեջ ձևավորվող գնահատականների և վերաբերմունքի վրա: Նամակագրության ժանրում բառային մակարդակում փոփոխությունները հաճախադեպ են, ինչը չի կարելի ասել քերականական մակարդակի մասին. վերջինս բավականին կայուն է:

8. Քաղաքավարի խոսքի ճիշտ կառուցման համար կարևորում ենք հետևյալ լեզվական միջոցները.

ա/ հնչյունաբանական մակարդակում՝ հնչերանգը,

բ/ բառային մակարդակում՝

- հիմնականում կատարողական բայերի կիրառումը
- հապավումների բացառումը,

գ/ քերականական մակարդակում՝ բայի հրամայական և պայմանական եղանակների կիրառումը,

դ/ շարահյուսական մակարդակում՝ միակազմ անվանական նախադասությունների կիրառումը:

9. Ատենախոսության գործնական հատվածում հաղորդակցական կաղապարների ուսումնասիրությամբ անցկացված զուգահեռները ֆրանսիական և հայկական լեզվամտածողական առանձնահատկությունների միջև ցույց են տալիս որ, ֆրանսերենում և հայերենում քաղաքավարության արտահայտչամիջոցներն ունեն համեմատաբար կայուն բառապաշար և քերականական կառույցներ, ինչը պայմանավորված է երկու մշակույթների որոշակի ընդհանրությամբ: Միջանձնային հարաբերություններում

քաղաքավարության խոսքային կաղապարները փոխանցվում են մշակույթից մշակույթ, ավելին՝ փոխանցելի են դառնում նաև լեզվական միջոցները բառային ու քերականականը, հնչյունաբանականն ու ոճականը:

10. Կաղապարային արտահայտությունների զուգադրական ուսումնասիրությունը բացահայտում է ֆրանսիական քաղաքավարական ոճին հատուկ կաղապարների գերակա կիրառությունը, միաժամանակ ֆրանսերենում և հայերենում դիմելաձևերի համակցման և միասնականացման միտումը:

Այսպիսով՝ ֆրանսերենի քաղաքավարության կաղապարների արտակա լեզվաոճական արտահայտչամիջոցները բառային և քերականական մակարդակներում անմիջականորեն կապված են հաղորդակցական վարվելաձևի և լեզվամշակութային առանձնահատկությունների հետ և տարիքային, գենդերային, ոճական առանձնահատկություններով պայմանավորված՝ ձեռք են բերում նոր երանգներ և լայնորեն կիրառվում խոսքային տարբեր ոճերում (առօրյա-խոսակցական ոճից մինչև բարձր ոճ), ինչը տրամաբանական է, քանի որ խոսակցական կառույցները հաճախակի օգտագործման արդյունքում միտում ունեն ներթափանցելու գրական, բարձր ոճ: Բարձր ոճում կաղապարները պահպանում են վարվելակարգի հետ կապված պարտադիր ձևաչափերը, հետևաբար, ընդգծված «քաղաքավարի» են: Քաղաքավարությունը բարձր ոճում պահպանվում է խոսքային կաղապարների բոլոր տեսակներում (ողջույն, հրաժեշտ, բարեմաղթանք, խնդրանք), իսկ խոսակցական ոճում այն հեռանում է վարվելակարգի ձևաչափերից՝ ձեռք բերելով քաղաքավարությանը ոչ բնորոշ երանգներ և իմաստներ:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Վարվեցողության խոսքային կաղապարները ֆրանսիական և հայկական մշակույթներում», Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Բանբեր, Բանասիրություն, Լեզվաբանություն, 1 (28), 219-229, 2013:

2. «Les particularités des moyens linguistiques de l'expression de la politesse sur le modèle de la famille française», Երևանի պետական լեզվաբանական համալսարանի Բանբեր, Բանասիրություն, Լեզվաբանություն 1(27), 35-41, 2013:

3. «Քաղաքավարության արտահայտչամիջոցները ֆրանսերենում ժամանակակից նամակագրության ժանրում», Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 3(56), 55-59, 2013:

4. «Անզլերեն համակարգչային եզրաբանության ներթափանցումը ֆրանսերենում»/Արդի բանասիրության հիմնախնդիրներ/Պրակ 8, 22-27:

БАБАЯН ЛИЛИТ АРКАДИЕВНА

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ СРЕДСТВА ВЫРАЖЕНИЯ ВЕЖЛИВОСТИ
В СОВРЕМЕННОМ ФРАНЦУЗСКОМ ЯЗЫКЕ
(в сопоставлении с армянским)

РЕЗЮМЕ

Настоящая работа посвящена изучению моделей вежливости различных речевых стилей, таких как семантические поля приветствия, прощания, пожелания, просьбы во французском языке в сопоставлении с армянским.

Актуальность работы обусловливается тем, что французская культура является первоосновой европейской цивилизации, на основании которой получили свое развитие общеевропейские правила вежливости, и исследование основных языковых формул речевого этикета во французской культуре, лежащих в основе этических норм, будет способствовать успешной межкультурной коммуникации. Настоящая работа актуальна в аспекте обеспечения межкультурного образования, а также исследования лингвостилистических норм коммуникации и выявления их закономерностей.

Основная **цель** работы - исследовать концепт «вежливость» во французском языке посредством выявления лингвостилистических особенностей понятия речевого этикета и речевых стратегий во французском языке в сопоставлении с армянским, что определяется обращением к языковому материалу речевого этикета современного французского языка и исследованию речевых моделей их выражения.

В соответствии с поставленной целью определяются следующие **задачи**:

- изучить труды по исследуемой теме, представить концепт «вежливость» и языковые средства его выражения во французской и армянской культурах, выявить различия этических норм в обеих культурах;
- обобщить понятие концепт и его языковое выражение посредством лингвостилистических особенностей речевых моделей; основываясь на современных прагматических теориях, выявить особенности межкультурной коммуникации;
- определить особенности выражения вежливости в процессе устной и письменной коммуникации на разных лингвостилистических уровнях, а также рассмотреть франкоязычный эпистолярный жанр, позволяющий дифференцировать стратегии вежливости и семантико-прагматические поля этикетных моделей. Такой анализ

обусловливается социальными, гендерными и другими факторами различия участников коммуникации;

- выявить устойчивые лексические, грамматические и стилистические единицы, характерные для каждой коммуникативной модели вежливости во французском и армянском языках.

Предметом исследования являются средства выражения вежливости и их лингвокультурологические особенности, коммуникативные модели речевого этикета во французском языке в сопоставлении с армянским.

Научная новизна работы заключается в сопоставительном изучении языкового материала в исследуемых языках. Научной новизной характеризуется проведение лингвостилистического анализа в свете прагматических концепций. В работе впервые проводится анализ концепта «вежливость» во французском языке в сопоставлении с армянским, компонентный анализ языковых единиц, а также всестороннее изучение языкового материала в аспекте когнитивной лингвистики.

Теоретическая значимость работы заключается в исследовании концепта «вежливость» в свете прагматических теорий представителей современных французской и англо-американской лингвистических школ, а также в аналитическом исследовании лингвостилистических приемов и методов выражения вежливости.

В работе рассматриваются ситуативно-речевые фразы, которые в дальнейшем могут быть использованы в межкультурных исследованиях.

Практическая ценность работы состоит в выборе и систематизации языкового материала и его анализе в соответствии с армянскими эквивалентами. Материалы исследования могут быть использованы в процессе обучения межкультурной коммуникации, переводу и другим лингвистическим дисциплинам. Проведенные исследования эпистолярного жанра могут найти непосредственное применение в преподавании письменной речи французского языка. В работе также предпринимается попытка создать франко-армянский справочник этикетных речевых выражений, который может быть использован всеми изучающими французский язык.

LILIT A. BABAYAN

THE LINGUOSTYLISTIC FEATURES OF EXPRESSING POLITENESS
IN THE MODERN FRENCH LANGUAGE
(in comparison with the armenian language)

SUMMARY

This dissertation studies the models of politeness in different speech styles in the French language in comparison with Armenian.

The topicality of the **research** paper is accounted for by the fact that the French culture as the basis of the European civilization served as a foreground for the development of the common European rules of politeness, and in this respect the main language patterns of the French etiquette which constitute the base of the ethical norms of the contemporary intercultural communication, may serve as a valuable source for the study of the patterns and norms of contemporary communication.

The **main purpose** of the research is to analyze the speech patterns of expressing politeness in the French language. The target of the research is the concept of politeness and the linguostylistic features of speech etiquette, as well as the speech strategies in the French language in comparison with the Armenian.

To achieve the goal of the research the following **objectives** are set forth:

- to review the scientific literature on the topic as well as introduce the linguistic means of expressing politeness in the French and the Armenian cultures, and to reveal the differences which exist between these cultures;
- to generalize the concept of politeness through the study of the linguostylistic features of the speech models and reveal the main features of the intercultural communication based on modern pragmatic theories;
- to identify the features of expressing politeness in oral and written communication on different linguostylistic levels which are reflected in the French epistolary genre. This study will allow to differentiate the strategies of politeness and the semantic-pragmatic fields of the ethical patterns which are determined by the social, gender and other factors.
- to reveal the fixed lexical, grammatical and stylistic means of expressing politeness which characterize each communication model as well as the norms in the French and Armenian languages.

The **subject** of this research paper is to study the means of expressing politeness and its linguostylistic features, the communicative models of speech etiquette in the French language in comparison with the Armenian language.


The **novelty** of the research lies in the comparative study of the language material in the two languages under study. Conducting the linguostylistic analysis of the language means expressing politeness in comparison with the French language is also new in our dissertation. For the first time an attempt is made to undertake a comprehensive study of the concept of "politeness" from the angle of the cognitive linguistics. On the other hand, componential comparative analyses of the language units have been carried out.

The **theoretical value** of the research. For the first time an attempt has been made to analyze the concept of "politeness" in the light of the contemporary linguostylistic theories of contemporary French and English-American linguistic schools, as well as the analytical study of the linguostylistic means and the methods of the concept of "politeness".

The study of situational speech patterns can later be applied to cross-cultural studies.

The **practical value** of the research is in the selection and the systematization of the language material in the French language in comparison with the Armenian language.

The results of the research can be used in academic programs and courses in intercultural communication, translation studies and other linguistic disciplines. Studies in the epistolary genre may find direct application in the teaching of writing skills in the French language. Within the framework of our study we have completed the handbook of the French-Armenian speech etiquette expressions, which may be used by the students who study French as Major or Minor at higher educational institutions as well as by schoolchildren to improve the vocabulary and advance their communicative skills in the French language.

A handwritten signature in black ink, appearing to be 'B. Hovhannisyan', written in a cursive style.



Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Տպաքանակ՝ 50: